ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1.

2022թ. օգոստոսի 29-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի դասախոսների 2022-23 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացում:
2. Ամբիոնի գծով 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների classroom էլ.հարթակում էջերի բացման, առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:
3. 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջակյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:
4. Ամբիոնի դասախոսների կողմից մշակած «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» գրքի հրատարակման հարցի քննարկում:

ԼՍԵՑԻՆ 1 – Ամբիոնի դասախոսների 2022-23 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

Ա.Մանուկյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա դասախոսների ծանրաբեռնվածությունը՝ ըստ դրույքների:

ՈՐՈՇԵՑԻՆ–2022-2023 ուստարվա աշխատանքները կազմակերպել ըստ ներկայացված և հաստատված ծանրաբեռնվածության:

ԼՍԵՑԻՆ 2- Ամբիոնի գծով 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների classroom էլ.հարթակում էջերի բացման, առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը

ՈՐՈՇԵՑԻՆ–Հաստատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները՝ ըստ պահանջվող ձևաչափերի և ըստ ծանրաբեռնվածության, երաշխավորել google classroom ներբեռնելու համար:

ԼՍԵՑԻՆ 3 – 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջակյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ 4 – Ամբիոնի դասախոսների կողմից մշակած «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» գրքի հրատարակման հարցի քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկման արդյունքում որոշվեց լրամշակել և հարստացնել գրքի բովանդակությունը, այնուհետև կրկին ներկայացնել քննարկման:

Նիստի նախագահ՝ Ա.Մանուկյան

Նիստի քարտուղար՝ Թ.Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2.

2022թ. սեպտեմբերի 22-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի ասպիրանտ Նադյա Սայադյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:
2. Ամբիոնի գծով 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների classroom էլ.հարթակում էջերի մշտադիտարկման արդյունքների ներկայացման և քննարկման հարցը:
3. Ամբիոնի կողմից ԲՈՒՀ-ի 100-ամյակին նվիրված «Սերունդների խաչմերուկ» միջոցառման նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը:
4. ՖԻԴԵ-ի և ամբիոնի համագործակցությամբ կազմակերպված «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» գիտագործնական կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը:
5. Առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսերի կուրսային աշխատանքների վերնագրերի և ղեկավարների հաստատման հարցը:
6. Առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի քննարկման և հաստատման հարցը:
7. Ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման հարցը:
8. Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2022-2025թթ.) գործողությունների կատարման պլանի քննարկման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Ամբիոնի ասպիրանտ Նադյա Սայադյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մանուչարյանը, Ք.Ասմարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ասպիրանտ Նադյա Սայադյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Ավագ նախադպրոցականի օտարալեզու բառապաշարի զարգացման

մեթոդական համակարգն առցանց խաղերի միջոցով», և գիտական ղեկավար նշանակել՝ մ.գ.թ., դոցենտ Արմենուհի Մանուկյանին:

ԼՍԵՑԻՆ 2- Ամբիոնի գծով 2022-23 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների classroom էլ.հարթակում էջերի մշտադիտարկման արդյունքների ներկայացման և քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Մանուկյանը, Թ.Նալբանդյանը

Ամբիոնի մասնագետ Թ.Նալբանդյանի կողմից ըստ ներկայացված ձևաչափերի մշտադիտարկվել են 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակում ամբիոնի գծով դասավանդվող բոլոր դասընթացների էլ.էջերը և մանրամասն հաշվետության տեսքով նախապես ուղարկվել է դասախոսներին: Թ.Նալբանդյանը նշեց, որ էջերում տեղադրված առարկայական նկարագրերում և թեմատիկ տրոհումներում հիմնականում առկա են տեխնիկական բացթողումներ, ինչպես նաև շաբաթական տեղադրվող նյութերում որոշ առարկաների էջերում բացակայում են թեմաները՝ Тема, Topic, որոշ դեպքերում կան նաև թեմատիկ տրոհման և շաբաթական տեղադրված նյութերի անհամապատասխանություններ:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մանուկյանը նշեց, որ մշտադիտարկման արձանագրված թերացումներն անհրաժեշտ է հնարավորինս արագ շտկել և հետագայում ուշադիր լինել էլեկտրոնային հարթակում աշխատանքների կատարման պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ–Որոշվեց բոլոր բացթողումները լրացնել մեկ շաբաթվա ընթացքում:

ԼՍԵՑԻՆ 3- Ամբիոնի կողմից ԲՈՒՀ-ի 100-ամյակին նվիրված «Սերունդների խաչմերուկում» միջոցառման նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Մանուկյանը, Ս.Մարությանը, Ս.Մանուչարյանը, Ա.Խուգեյանը, Ժ.Խաչատրյանը

ՈՐՈՇԵՑԻՆ– «Սերունդների խաչմերուկ» միջոցառումը կազմակերպել հոկտեմբերի 8-ին և հստակեցնել միջոցառման նախապատրաստական աշխատանքներին յուրաքանչյուր դասախոսի աշխատանքը: Հաստատել աշխատաժողովի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ 4- ՖԻԴԵ-ի և ամբիոնի համագործակցությամբ կազմակերպված «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» գիտագործնական կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Մ.Ամիրաղյանը

ՈՐՈՇԵՑԻՆ– Քննարկվեց և որոշվեց կոնֆերսանսի աշխատանքային ուղղությունները և ամբիոնի կողմից ներկայացվող հոդվածները ներկայացնել անգլերեն լեզվով:

ԼՍԵՑԻՆ 5-Առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Ս.Հովսեփյանը

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ 6- Ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2022-2023 ուստարվա ամբիոնի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ 7- Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2022-2025թթ.) գործողությունների կատարման պլանի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Առաջնորդվելով ՀՊՄՀ զարգացման ՌԾ-ի 2022-25թթ. գործողությունների կատարման պլանով, կազմակերպել ամբիոնում իրականացվող ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործընթացները, որոնք համապատասխանեցվել են նաև ամբիոնի 2022-2023թթ. աշխատանքային պլանին:

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3.

2022թ. հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպման հարցը (3 շաբաթ):
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի ընթացիկ հաշվետվությունների ներկայացման հարցը:
3. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը:
4. Ամբիոնի դասախոսների 2022 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը:
5. 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 4-րդ և 5-րդ կուրսերի 1-ին կիսամյակների մանկավարժական պրակտիկաների կազմակերպման հարցը:
6. «Սերունդների խաչմերուկ» աշխատաժողովի արդյունքների ամփոփում:
7. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1 - Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպման հարցը (3 շաբաթ)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Ղազարյանը

Պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանը նշեց, որ ՄԿԾ 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվելու է ս.թ. սեպտեմբերի 20-ից նոյեմբերի 4-ը: Պրակտիկան անցկացվելու է ՀՊՄՀ Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 1-ից 3-րդ կուրսերում՝ ըստ կազմված դասացուցակի: Պրակտիկան կամփոփվի յուրաքանչյուր ուսանողի մանկավարժահետազոտական թղթապանակի ներկայացմամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել մանկավարժահետազոտական պրակտիկայի դասացուցակը և պրակտիկան կազմակերպել ըստ ժամանակացույցի:

ԼՍԵՑԻՆ 2 -Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի ընթացիկ հաշվետվությունների ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Ս.Հովսեփյանը, Մ.Ավագյանը, Ս.Մանուչարյանը

ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ղեկավարները ներկայացրեցին իրենց ղեկավարությամբ մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ: Ըստ ներկայացված հաշվետվությունների ավարտված են գրեթե բոլոր թեզերի տեսական ուսումնասիրությունները և աշխատանքային փուլի մեջ են հետազոտական աշխատանքները, որոնք քննարկվում են ղեկավարների հետ:

ԼՍԵՑԻՆ 3- Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Մ.Ավագյանը, Մ.Ամիրաղյանը

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաներն ու ղեկավարներին՝ ըստ 2022-23 ուստարվա ծանրաբեռնվածության:

ԼՍԵՑԻՆ 4- Ամբիոնի դասախոսների 2022 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Թ.Նալբանդյանը

Ամբիոնի մասնագետ Թ.Նալբանդյանը նշեց, որ բոլոր դասախոսները ուղարկված ձևաչափով, նշված ժամանակահատվածում ուղարկել են իրենց աշխատությունները, որոնք ընդհանրացվել են և մեկ ամբողջական ձևաչափով ներկայացվել է դեկանատ: Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մանուկյանը նշեց, որ ամբիոնի դասախոսները պետք է շարունակեն ընդլայնել իրենց հետազոտական աշխատությունների ցանկը և

նշեց նաև, որ ամբիոնը պետք է թափ տա «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» ձեռնարկի վերանայման և տպագրման աշխատանքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել և բուհի գիտահետազոտական կենտրոն ներկայացնել ՊԴԱ աշխատությունների տեղեկատվությունը:

ԼՍԵՑԻՆ 5- 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 4-րդ և 5-րդ կուրսերի 1-ին կիսամյակների մանկավարժական պրակտիկաների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Ղազարյանը

Պրակտիկայի ղեկավարը նշեց, որ հեռակա 4-րդ և 5-րդ կուրսերի 1-ին կիսամյակների մանկավարժական պրակտիկաների կազմակերպման ժամանակացույցերը փոփոխվել են և պրակտիկաների կազմակերպումը հետաձգվել է նոյեմբերի 14-ից դեկտեմբերի 11-ը: Խմբերը ղեկավարներով բաշխված են ըստ ծանրաբեռնվածության, մանկապարտեզների բազան դեռ հստակեցված չէ՝ պայմանավորված ուսանողների թվաքանակով: Աշխատող և սահմանամերձ ուսանողներն իրենց դիմումների և տեղեկանքների համաձայն պրակտիկան կանցկացնեն համապատասխան մանկապարտեզներում:

ՈՐՈՇԵՑԻՆ– Ըստ ժամանակցույցի ընթացք տալ ԲԿԾ հեռակա 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաներին:

ԼՍԵՑԻՆ 6- «Սերունդների խաչմերուկ» աշխատաժողովի արդյունքների ամփոփման հարցը:

Նշվեց, որ աշխատաժողովը նվիրված էր ԲՈՒՀ-ի 100-ամյակին և հետաքրքիր էր իր ձևաչափով: Ներկաները տպավորված էին և հուզված: Աշխատաժողովի ողջ ընթացքը նկարահանվում էր և կցուցադրվի հաջողության բանաձև հաղորդաշարով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Ի.Պոնոմարոնկոն

ՈՐՈՇԵՑԻՆ-Հնարավորության դեպքում աշխատաժողովը կազմակերպել յուրաքանչյուր տարի:

Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 7 - «Նախադպրոցական կրթության որակի փորձաքննություն» մագիստրոսական կրթական ծրագրի վերանայման և քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Վերանայել և վերսկսել աշխատանքներն ուղղված «Նախադպրոցական կրթության որակի փորձաքննություն» մագիստրոսական կրթական ծրագրի ներդրման ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ 8- ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված բուհի կողմից պարգևատրմանն՝ ամբիոնի ՊԴԱ կազմից աշխատակիցների տվյալների ներկայացման, քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված բուհի կողմից պարգևտրմանն՝ ամբիոնի ՊԴԱ կազմից առաջադրել պրոֆեսոր Վաչագան Նավասարդյանին և դոցենտ Սահակ Հովսեփյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ 9- Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացի ծրագրի կազմում և ԿԳՄՄՆ-ի կողմից կազմակերպված մրցույթին ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Կատարել աշխատանքի բաժանում և համապատասխան ծրագիրն ամբողջական տեսքով՝ պահանջվող ձևաչափերով ներկայացնել ԿԳՄՍ նախարարություն:

ԼՍԵՑԻՆ 10- Ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Մ.Ամիրաղյանի Գիտական խորհրդի որոշմամբ դոցենտի պաշտոնում ընտրվելու հարցը:

Ամբիոնի ողջ անձնակազմը շնորհավորեց Մ.Ամիրաղյանին:

ԼՍԵՑԻՆ 11- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա 1-ին կուրսերի մագիստրոսական թեմաների և գիտական ղեկավարների վերահաստատման հարցը՝ իրենց դիմումի համաձայն կցագրումից դուրս եկած 2 ուսանողներով պայմանավորված:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Մ.Ավագյանը, Ս.Հովսեփյանը, Ա. Սիմոնյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել մագիստրոսական աշխատանքների ներկայացված թեմաները:

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4.

2022թ. նոյեմբերի 22-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի և ՇԳԻ տնօրեն Ս.Լպուտյանի նախաձեռնությամբ Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության հետ հանդիպման կազմակերպում:
2. Հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը:
3. Ամբիոնի ՊԴԱ կողմից մշակված «Երեխաները շախմատի աշխարհում» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Ամբիոնի և ՇԳԻ տնօրեն Ս.Լպուտյանի նախաձեռնությամբ Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության հետ հանդիպման կազմակերպում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը

ՇԳԻ տնօրեն Ս.Լպուտյանի պայմանավորվածությամբ հանդիպում կազմակերպվեց ամբիոնի դասախոսական կազմի և Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ՝ Մ.Խաչատրյանի հետ, քննարկվեցին շախմատը նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներդնելու նպատակահարմարության հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախնական պայմանավորվածությամբ որոշվեց պետական նախակրթարաններում փորձ անել ներդնել շախմատային նախագիտելիքները:

ԼՍԵՑԻՆ 2- Հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա 1-ին կուրսի խորհրդատվությունները կազմակերպել ըստ ներկայացված ժամանակացույցի:

ԼՍԵՑԻՆ 3-Ամբիոնի ՊԴԱ կողմից մշակված «Երեխաները շախմատի աշխարհում» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Մ.Ամիրաղյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Նոյեմբեր ամսվա ընթացքում ավարտին հասցնել ձեռնարկի հետ կապված աշխատանքները և ներկայացնել Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհուրդ:

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5.

2022թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի 2022թ. հաշվետվության ներկայացման և քննարկման հարցը:
2. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստման հարցը:
3. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացի մրցույթին 2-րդ փուլով դիմելու հարցի քննարկում:
4. Առկա 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ աշխատանքների քննարկում:
5. Ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման արդյունքների քննարկում:
6. Դիմորդների կողմնորոշման և տեղեկատվության տարածման աշխատանքների կազմակերպման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Ամբիոնի 2022թ. հաշվետվության ներկայացման և քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել հաշվետու ժամանակահատվածում ներկայացված հաշվետվությունը:

ԼՍԵՑԻՆ 2- 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախապատրաստվել 2-րդ կիսամյակին՝ առաջնորդվելով յուրաքանչյուր դասախոսի ծանրաբեռնվածությամբ և ներկայացված դասացուցակների /առկա, հեռակա/:

ԼՍԵՑԻՆ 3- Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացի մրցույթին 2-րդ փուլով դիմելու հարցի քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը, Ի.Պոնոմարենկոն

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախատեսված ժամանակահատվածում վերանայել նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման մոդուլը և կրկին դիմել մրցույթի 2-րդ փուլին:

ԼՍԵՑԻՆ 4- Առկա 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ աշխատանքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Մ.Ավագյանը, Ա.Խուգեյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Նշված կուրսերի ուսանողներին տալ անհրաժեշտ խորհուրդներ՝ գիտահետազոտական աշխատանքներն անհրաժեշտ ուղղությամբ կատարելու համար: Պարզաբանել բոլոր ուսանողների հարցերը:

ԼՍԵՑԻՆ 5- Ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման արդյունքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը:

Հաշվետու ժամանակահատվածում, երրորդ տարվա հայցորդ **Լիլիթ Ղազարյանը** պլանավորել և կատարել է հետևյալ աշխատանքները.

1. Աշխատում է «Ինքնուրույն վարքագծի օրինաչափ դրսևորումները նախադպրոցականի փորձարարական գործունեության ընթացքում» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի վրա: Գիտատեսական և մեթոդական ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում փորձում է բացահայտել ավագ նախադպրոցականի ինքնուրույն օրինաչափ դրսևորումները փորձարարական գործունեության միջոցով և դրանց իրականացման հոգեբանամանկավարժական պայմանները, որպես նախադպրոցականի սոցիալական զարգացման խթանիչ ուժ:
2. Մասնակցել է ասպիրանտական դասընթացներին, հանձնել ստուգարքներն ու քննությունները: Պատրաստվում է մանկավարժության մինիմում-քննությանը:
3. Ունի տպագրված հոդվածներ մասնագիտական տարբեր ամսագրերում:

Հաշվետու ժամանակահատվածում, երկրորդ տարվա հայցորդ **Ժաննա Հարությունյանը** պլանավորել և կատարել է հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել է ասպիրանտուրայի կողմից կազմակերպած բոլոր դասընթացներին և հանձնել հետևյալ մինիմումները՝ կրթական տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ և գիտական հետազոտությունների մեթոդաբանություն առարկաներից:
2. Հավաքագրել է շուրջ 20 մասնագիտական գրականություն :
3. Ունի տպագրված 2 հոդված: Ներկայացրել է տպագրման ևս 1 հոդված "Интернаука" ամսագրում ՝ «Շախմատի դերը ավագ նախադպրոցականի անձնավորության ձևավորման գործընթացում» վերնագրով:
4. Գիտական ղեկավարի ուղղորդմամբ աշխատում է՝ թեմայի շուրջ գիտատեսական վերլուծությունների ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ատեստավորել ամբիոնի 2 հայցորդներին՝ ներկայացված հաշվետվությունների հիման վրա:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ 6- Դիմորդների կողմնորոշման և տեղեկատվության տարածման աշխատանքների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Մ.Ավագյանը, Ա.Խուգեյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Կազմել և ներկայացնել քաղաքային և մարզային դպրոցների այցելությունների ժամանակացույց՝ ապագա դիմորդների կողմնորոշման և տեղեկատվության տարածման համար:

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6.

2023թ. փետրվարի 6-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման հարցը:
2. 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և google classroom ներբեռնելու հարցը:
3. 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:
4. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնա-ճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:
5. Առկա ուսուցմամբ ՄԿԾ 1-ին և 2-րդ, Հեռակա ուսուցմամբ ՄԿԾ 1-ին կուրսերի մագիստրոսական թեզերի և առկա ԲԿԾ 4-րդ և հեռակա ԲԿԾ 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների ընթացիկ հաշվետվությունների ներկայացում /ուսանողների կողմից լրացվում է էլեկտրոնային/:
6. Շախմատի վերապատրաստման աշխատանքների արդյունքների ամփոփում- Մ.Ամիրաղյան
7. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ 1- 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննաշրջանը կազմակերպել ըստ ուղարկված ժամանակացույցի, հաստատել 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակի քննական առարկաների տոմսերը:

ԼՍԵՑԻՆ 2- 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և google classroom ներբեռնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Թ.Նալբանդյանը

Ամբիոնի մասնագետը նշեց, որ ամբիոնի քլաս էջով տեղադրել է բոլոր առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները համապատասխան էջերում, դասախոսները պետք է կատարեն համապատասխան լրացումներն ու ուղղումները՝ նշված ժամկետում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2021-2022 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ԱՈՒՄՓ-ները:

ԼՍԵՑԻՆ 3- 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների վերանայված միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ 4- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնա-ճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Ղազարյանը

Ա.Ղազարյանը ներկայացրեց, որ առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի 2022-2023 ուստարվա նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 2-րդ կուրսի ներքոնշյալ ուսանողների 2-րդ կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկան (շաբաթական մեկ օր) նախատեսվում է կազմակերպել 2023թ. փետրվարի 14-ից մինչև մայիսի 23-ը <<Ժպիտներ>> և Երևանի թիվ 43 մանկապարտեզներում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Պրակտիկան կազմակերպել ըստ ընթացակարգի, հրամանները պատրաստ լինելուց հետո ամբիոնի մասնագետի կողմից ակտիվացնել պրակտիկայի քլասրում էջեր:

ԼՍԵՑԻՆ 5- Առկա ուսուցմամբ ՄԿԾ 1-ին և 2-րդ, Հեռակա ուսուցմամբ ՄԿԾ 1-ին կուրսերի մագիստրոսական թեզերի և առկա ԲԿԾ 4-րդ և հեռակա ԲԿԾ 5-րդ կուրսերի

ավարտական աշխատանքների ընթացիկ հաշվետվությունների ներկայացում /ուսանողների կողմից լրացվում է էլեկտրոնային/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, ղեկավարները:

Յուրաքանչյուր ղեկավար նախապես ամբիոն էր ուղարկել իր ուսանողների կողմից աշխատանքանքային ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ, բացի այդ քլասրում էջերում ամբիոնի կողմից տեղադրվել են ՄԿԾ աշխատանքային պլանները, որոնք ուսանողները պետք է լրացնեն տրված ժամկետում: Բակալավրիատի ընթացիկ աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները ևս ամբիոնի որոշմամբ լրացվում են ուսանողների կողմից, դրանք ևս տեղադրված են համապատասխան էջերում:

Ղեկավարների հավաստմամբ մագիստրատուրայում խնդրահարույց դեպք չունենք, բոլոր ուսանողներն աշխատում են բնականոն, պահպանելով ղեկավարի հետ հետադարձ կապը:

Իրինա Պոնոմարենկոն տեղեկացրեց, որ 1-ին կիսամյակի ընթացքում չի կարողացել կապ հաստատել իր ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Ենգիբարյանի հետ, փորձել է և՛ զանգահարել, և՛ հայտարարություններ է գրել քլասրում հարթակում:

Աննա Սիմոնյանը տեղեկացրեց, որ իր ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողուհի Հայաստան Եղիազարյանը ևս գրեթե չի պահպանում հետադարձ կապը, չի արձագանքում ղեկավարի զանգերին և հաղորդագրություններին: Աշխատանքն անպատրաստ վիճակում է, այն նյութը, որ որ ուղարկվել էր ղեկավարին և ուղղորդվել ուղղումներ կատարելու համար, այլևս չի ներկայացրել ղեկավարին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն, հետևողական լինել վերոնշյալ 2 ուսանողուհիների հետ կապի հաստատման և նրանց ուղղորդելու ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ 6- Շախմատի վերապատրաստման աշխատանքների արդյունքների ամփոփում- Մ.Ամիրաղյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Մ.Ամիրաղյանը

Մ.Ամիրաղյանը նշեց, որ շախմատի 3-շաբաթյա վերապատրաստումը բավականին արդյունավետ էր: Այս անգամ վերապատրաստմանը մասնակցում էին պետական ՆՈՒՀ-ի ներկայացուցիչներ, նրանք բավականին հետաքրքրված էին և հաջողությամբ ավարտեցին վերապատրաստումը, ստանալով հավաստագրեր:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հնարավորության դեպքում գործընթացը կկրի շարունակական բնույթ, ներգրավելով ավելի շատ թվով մանկավարժական աշխատողների:

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7.

2023թ. մարտի 15-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման հարցը:

2. ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Ղազարյանը

Ա.Ղազարյանը ներկայացրեց մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ժամանակացույցը, ուսանողների խմբերին, մեթոդիստներին, մանկապարտեզները: Տեղեկացրեց, որ յուրաքանչյուր խումբ կունենա քլասրում հարթակ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն և կազմակերպել մանկավարժական պրակտիկան ըստ հրամանների:

ԼՍԵՑԻՆ 2- ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, ղեկավարներ

Ա.Սիմոնյանը նշեց, որ իր ղեկավարությամբ հեռակա 5-րդ կուրսում ավարտական աշխատանք գրող Հայաստան Եղիազարյանն ունի բազմաթիվ բացթողումներ և չի կատարում ղեկավարի կողմից ասված ուղղումները, չի ներկայանում խորհրդատվություններին:

Ի.Պոնոմարենկոն նշեց, որ իր ղեկավարությամբ հեռակա 5-րդ կուրսում ավարտական աշխատանք գրող Սոնա Ենգիբարյանը ևս ունի բազմաթիվ բացթողումներ

և չի կատարում ղեկավարի կողմից ասված ուղղումները, չի ներկայանում խորհրդատվություններին։

Նշված 2 աշխատանքներն էլ ղեկավարների կարծիքով չեն կարող տեղավորվել ժամանակահատվածներում և ներկայացնել ավարտուն տեսքով ավարտական աշխատանքներ։

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն, նախապատրաստվել կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանություններ։

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8.

2023թ. ապրիլի 21-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի, ԲԿԾ առկա ուսուցման համակարգի 4-րդ և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների քննարկում և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

3. Ընթացիկ հարցեր:

<u>ԼՍԵՑԻՆ 1</u>- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի, ԲԿԾ առկա ուսուցման համակարգի 4-րդ և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների քննարկում և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ</u>- Ա.Մանուկյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը, Ս.Հովսեփյանը, Ս.Մանուչարյանը, Մ.Ավագյանը, Մ.Ամիրաղյանը, Ա.Սիմոնյանը, Ա.Խուգեյանը

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մանուկյանը նշեց, որ Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա առկա ԲԿԾ 4-րդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Վահանի Գևորգյանը չի ներկայացել երկու փուլով կազմակերպվող նախապաշտպանություններին, քանի որ ծննդաբերել է:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u>-

- ԲԿԾ առկա 4-րդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Վահանի Գևորգյանին չերաշխավորել հրապարակային պաշտպանության:

- Նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա (ապրիլի 19 և 21), երաշխավորել հրապարակային պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը:

<u>ԼՍԵՑԻՆ 2</u>- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ</u>- Ա.Մանուկյանը, Ա.Ղազարյանը

Ա.Ղազարյանը նշեց, որ նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 1-ին կուրսի ներքոնշյալ ուսանողների 2-րդ կիսամյակի մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 2023 թ. մարտի 30-ից մինչև ապրիլիի 20-ը ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի կրթական ծրագրի 1-ին, 2-րդ և 4-րդ կուրսերում, ըստ ներկայացված դասացուցակի:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u>- Ընդունել ի գիտություն և կազմակերպել մանկավարժական պրակտիկան ըստ հրամանների:

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9.

2023թ. մայիսի 21-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների քննարկում և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

<u>ԼՍԵՑԻՆ 1</u>- Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ</u>- Ա.Մանուկյանը, Թ.Նալբանդյանը

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u>- Նախապատրաստվել ամփոփիչ ավարտական քննությունների կազմակերպմանը: Ամբիոնի մասնագետը նախապես կհավաքագրի անհրաժեշտ տեղեկատվությունը և կտեղադրի ամփոփիչ ատեստավորման համապատասխան էլ.էջերում: Աշխատանքների տպագրված տարբերակները ներկայացնել ամբիոն նշված ժամկետներում:

<u>ԼՍԵՑԻՆ 2-</u> Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով 2022-2023 ուսումնական տարվա ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 5-րդ կուրս թվով 31 ավարտական աշխատանք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը, Ս.Հովսեփյանը, Ս.Մանուչարյանը, Մ.Ավագյանը, Մ.Ամիրաղյանը, Ա.Սիմոնյանը, Ա.Խուգեյանը

ՈՐՈՇԵՑԻՆ -

1. Նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա (մայիսի 3-ին և 5-ին), երաշխավորել հրապարակային պաշտպանության 14 ավարտական աշխատանքները:
2. Թվով 17 ավարտական աշխատանքներ, որոնք ունեին որոշակի թերություններ և ավարտուն տեսքի բերված չէին, նշանակել կրկնակի նախապաշտպանություն ս.թ. մայիսի 10-ին:

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10.

2023 թ. մայիսի 10-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով 2022-2023 ուսումնական տարվա ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի թվով 17 ավարտական աշխատանքների կրկնակի նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

<u>ԼՍԵՑԻՆ-</u> Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով 2022-2023 ուսումնական տարվա ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի թվով 17 ավարտական աշխատանքների կրկնակի նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ.</u>

1. Կրկնակի նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա (մայիսի 10) հետևյալ ավարտական աշխատանքները՝ թվով 14, երաշխավորել հրապարակային պաշտպանության:
2. Կրկնակի նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա ամբիոնը գտավ, որ Ենգիբարյան Սոնայի և Հովհաննիսյան Աստղիկի ավարտական աշխատանքներն ունեն բազմաթիվ թերություններ. ուսանողները չեն կարողանում ներկայացնել աշխատանքի հիմնական դրույթներն ու բովանդակությունը, չունեն սահիկներ, ուսանողների կողմից անտեսվել են 1-ին նախապաշտպանության ժամանակ արված դիտողություններն ու ուղղորդումները, չեն համագործակցել ղեկավարների հետ: Ուստի ամբիոնը միաձայն որոշեց վերոնշյալ ուսանողների ավարտական աշխատանքները չերաշխավորել հրապարակային պաշտպանության:

3. Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մանուկյանը նշեց, որ վերոնշյալ կուրսի ուսանողուհի Եղիազարյան Հայաստանը հեռախոսազանգով տեղեկացրել է, որ հղիության պատճառով այցելում է բժշկի և նշված օրը չի կարող ներկայանալ նախապաշտպանության:

   Եղիազարյան Հայաստանի կրկնակի նախապաշտպանությունը կազմակերպել մայիսի 15-ին ժամը 14:30:

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11.

2023 թ. մայիսի 15-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով 2022-2023 ուսումնական տարվա Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի ուսանողուհի Եղիազարյան Հայաստանի կրկնակի նախապաշտպանության արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:
2. Ամբիոնի հայցորդ Նարինե Արթունյանի թեմայի հաստատման և գիտական ղեկավարի առաջադրման հարցը:

<u>ԼՍԵՑԻՆ 1-</u> Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով 2022-2023 ուսումնական տարվա Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի ուսանողուհի Եղիազարյան Հայաստանի կրկնակի նախապաշտպանության արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ</u>- Եղիազարյան Հայաստանի ներկայացման հիման վրա ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արմենուհի Մանուկյանը նշեց, որ.

- ուսանողուհին չի կարողանում ներկայացնել իր ավարտական աշխատանքը, անտեղյակ է իր ավարտական աշխատանքի բովանդակությունից, չունի տեսասահիկ:
- Բացի այդ ավարտական աշխատանքում կան ուրիշի մտավոր սեփականության յուրացման փաստեր, տեսական մասում նշված են թեմային անհամապատասխան հիմնավորումներ, իմաստ չարտահայտող և նախադպրոցական կրթության ոլորտին չվերաբերող շարադրանքներ:
- Հետազոտական մասում ներկայացված են պարապմունքներ և դասեր, այնինչ նախադպրոցական ուսումնական հաստատությունում դասեր չեն

կազմակերպվում, ներկայացված են հետազոտական աշխատանքի տոկոսային վերլուծություններ, որոնք հիմնավորված չեն, պարզ չէ, թե նշված երեխա թիվ և տոկոսային հաշվարկն ինչով է պայմանավորված:

- Գրականության ցանկում ներկայացված է 52 անուն գրականություն, սակայն դրանք բացարձակապես չեն համապատասխանում աշխատանքում արված հղումներին, ինչպես նաև աշխատանքի 39-ից 62 էջերում արված են հղումներ 53-ից 75 գրականության ցանկի հերթական թվերով, այնինչ այդ թվերով գրականություն ցանկում ներկայացված չէ:
- Ուսանողի կողմից անտեսվել է 1-ին նախապաշտպանության ժամանակ արված դիտողություններն ու ուղղորդումները:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ-</u> Հիմք ընդունելով ղեկավարի բացասական կարծիքը և ավարտական աշխատանքի բացթողումները ամբիոնը միաձայն որոշեց Հայաստան Եղիազարյանի ավարտական աշխատանքը չթույլատրել պաշտպանության:

<u>ԼՍԵՑԻՆ 2</u> - Ամբիոնի հայցորդ Նարինե Արթունյանի թեմայի հաստատման և գիտական ղեկավարի առաջադրման հարցը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ</u> – Ա.Մանուկյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մանուչարյանը, Մ.Ամիրաղյանը:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u>- հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ Նարինե Արթունյանի ատենախոսության թեման հետևյալ վերնագրով «Նախադպրոցականների միջանձնային հարաբերությունների կայուն շարժընթացի ապահովումը համընդհանուր ներառման պայմաններում», և գիտական ղեկավար նշանակել՝ ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, մ.գ.թ. Ալլա Դալլաքյանին:

Նիստի նախագահ՝ *Ա.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

2023 թ. հունիսի 5-ին տեղի ունեցած Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկում:
2. 2022-23 ուսումնական տարվա ամբիոնի դասախոսների ծանրաբեռնվածության կատարման ընթացքի մասին քննարկում:
3. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պարկտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1- Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքներն ընդունել ի գիտություն, հետագայում աշխատել այն բացթողումների վրա, որոնք ակներև էին քննության ժամանակ:

ԼՍԵՑԻՆ 2- 2022-23 ուսումնական տարվա ամբիոնի դասախոսների ծանրաբեռնվածության կատարման ընթացքի մասին քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

Ամբիոնի վարիչի պ/կ Ա.Մանուկյանը ներկայացրեց, որ հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծանրաբեռնվածությունն ըստ ուսումնական պլանի համապատասխանում է կատարված ուսումնական աշխատանքի ծավալին: Ամբիոնի դասախոսները կատարել են ծանրաբեռնվածությամբ նախատեսված դասաժամերը: Ուսումնական գործընթացը կազմակերպվել է հիբրիդային տարբերակով՝ ըստ կուրսերի դասացուցակներում նշված օրերի՝ առցանց և առերես, այս գործընթացում դասախոսները գրեթե չեն ունեցել խնդիրներ, դասաժամերը հստակ իրականացվել են

ըստ դասացուցակի, որևէ փոփոխության դեպքում տեղեկացրել են ամբիոնի մասնագետին, ով լրացումներ և նշումներ է կատարել էլեկտրոնային դասացուցակներում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պարկտիկաների պաշտպանության կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Ղազարյանը

Պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանը նշեց, որ «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական և կիրառական, վերլուծական պրակտիկաների թղթապանակների պաշտպանությունը ըստ ժամանակցույցի կկազմակերպվի սույն թվականի հունիսի 19-ին և 20-ին երկու հերթափոխով: Արդյունքները կներկայացվեն հաշվետվության տեսքով:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն և կազմել անհրաժեշտ փաստաթղթերը:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ 4- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Աննա Սիմոնյանի դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա,Մանուկյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Մ.Ավագյանը, Ք.Ասմարյանը, Մ.Ամիրաղյանը:

Ելույթ ունեցան Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մ.գ.թ., դոցենտ՝ Ա.Մանուկյանը, Աննա Սիմոնյանի գիտական ղեկավար՝ Սվետլանա Մարությանը, ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար Ալլա Դալլաքյանը:

Ա.Մանուկյանը նշեց, որ Ա.Սիմոնյանը բուհում դասավանդում է 2013 թվականից, ատենախոսությունը պաշտպանել է 2018 թվականին, ունի համապատասխան գիտական հոդվածներ և «Ավագ նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հնարավորություններն առարկայական-զարգացնող միջավայրի

պայմաններում» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկ (2020թ.), ինչպես նաև 2022 թ. մշակել է «Վաղ մանկության տարիքի առաջին խմբի կրթական համալիր ծրագիր»-ը:

Ելույթ ունեցողները ներկայացրեցին Աննա Սիմոնյանի կատարած գիտահետազոտական աշխատանքների և ուսումնամեթոդական ձեռնարկի բովանդակությունը, շեշտելով դրանց կարևորությունը, ավագ նախադպրոցականի ճանաչողական գործունեության մեջ առարկայական զարգացման դերը, միջոցները, պայմանները, բացի դրանից, ելույթ ունեցողները ներկայացրին Աննա Սիմոնյանի գիտամանկավարժական գործունեության արդյունավետությունը, անձնային որակները, մասնագիտական պատրաստվածությունը, ուսանողների հետ տարվող անհատական և խմբային աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քվեարկության արդյունքում ամբիոնի դասախոսները միաձայն (կողմ-14, դեմ-0, ձեռնպահ-0) քվեարկեցին Աննա Սիմոնյանի օգտին և որոշեցին նրա թեկնածությունը դոցենտի գիտական կոչում ստանալու վերաբերյալ դրական կարծիքով ներկայացնել սկզբնական կրթության ֆակուլտետի խորհուրդ:

Նիստի նախագահ՝ **Ա.Մանուկյան**

Նիստի քարտուղար՝ **Թ. Նալբանդյան**